

**ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ N 18/4

ք.Երևան

27 մարտի 2018թ.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ Ա/Ձ Մոհդ Յունուսի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Մոհդ Յունուսը հայտնում է, որ հանդիսանում է Հնդկաստանի Հանրապետության քաղաքացի, նպատակ ունի զբաղվել առևտրային գործունեությամբ և 13.06.2017թ. գրանցվել է որպես անհատ ձեռնարկատեր:

Մոհդ Յունուսի վիզայի երկարացման ուշացման պատճառով նա հնարավորություն չի ունեցել մինչև 2018թ. փետրվարի 20-ը ներկայացնել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Մոհդ Յունուսը խնդրում է շրջանառության հարկի հայտարարությունը համարել սահմանված ժամկետում ներկայացված:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

Մոհդ Յունուսը 13.06.2017թ. ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվել է որպես անհատ ձեռնարկատեր:

Հարկ է նշել, որ հարկային մարմնի կողմից 18.08.2017թ. Ա/Ձ Մոհդ Յունուսին սահմանված կարգով ծանուցվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն ներկայացվելու վերաբերյալ: Արդյունքում 18.08.2017թ. Ա/Ձ Մոհդ Յունուսի կողմից էլեկտրոնային եղանակով ներկայացվել է շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն և 13.06.2017թ.-ից համարվել է շրջանառության հարկ վճարող:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ Հարկային օրենսգրքի 254-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով հստակ սահմանված է, որ շրջանառության հարկ վճարողներ են համարվում (անկախ բացառապես արտոնագրային հարկով հարկման օբյեկտ համարվող գործունեության տեսակներ իրականացնելու հանգամանքից) նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանը բավարարող ռեզիդենտ առևտրային կազմակերպությունները, անհատ

ձեռնարկագրերը և նոտարները (բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի) տվյալ հարկային տարվա հունվարի 1-ից մինչև տվյալ հարկային տարվա ավարտը (բացառությամբ Օրենսգրքի 59-րդ հոդվածով սահմանված՝ հարկային տարվա ընթացքում ԱԱՀ վճարող համարվելու դեպքի), եթե հարկ վճարողը մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին է ներկայացրել հարկային մարմնի հաստատված ձևով՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Մոհր Յունուսի կողմից մինչև տվյալ հարկային տարվա փետրվարի 20-ը ներառյալ հարկային մարմին չի ներկայացվել շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություն, հետևապես 2018թ. ընթացքում շրջանառության հարկ վճարող նա չի կարող համարվել:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Ա/Ձ Մոհր Յունուսի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ